

# ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

Ա. ՊԱՐՏԻԶԵԱՆ՝ «Հայ եկեղեցւոյ տագնապը եւ անոր պատասխանատուները», Պոսքըն, 1936.

Նրանք, որ լաւ գիտեն Հայոց պատմութիւնը եւ տեղեակ են Հայ եկեղեցու դերին անցեալում եւ ներկայում, անշուշտ, մեծ հետաքրքրութեամբ պիտի կարդան Ա. Պարտիզեանի այս ընդարձակ աշխատութիւնը, ուր 440 մեծադիր էջերի մէջ հազաւազիտ բարեխղճութեամբ ու մանրամասնութեամբ ցոյց են տրւած բոլոր այն վերաբեր, որոնք բացել են հայ եկեղեցու մարմնի վերա՛րա՛ հայ հանրային եւ ազգային կեանքի կայակցութեամբ: Միաժամանակ պատուում է հայ բոլշեւիկների երեսից եկեղեցու «պաշտպաններին» կեղծ դիմակը:

Ա. Պարտիզեանը առաջադրել է հետեւեալ նպատակները.

- 1.- Շեշտել արտասահմանի Հայ դադութիւններու եւ մանաւանդ ամերիկահայ դադութի տաղնապի քաղաքական նշանակութիւնը,
- 2.- Ցոյց տալ, որ Հայ եկեղեցւոյ շուրջ ու ներս սկսած պայքարը կեղծ եւ արեւստական է,
- 3.- Երեւան բերել այն կողմը, որ ո՛ր եւ է շահ կահնկալէր նման կռիւէ մը, եւ այսպիսով գտնել նախադարձակը,
- 4.- Գտնել այն անձերը, որոնք եղան անհաւատարիմ իրենց ուխտին ու դիրքին եւ Հայոց եկեղեցիին մէջ զեարին պատրաստեցին քաղաքային կռիւ համար, ոչ միայն անձնապէս յարեւոյժ այս կամ փորձելով եկեղեցին հատուածին, այլ նաեւ փորձելով եկեղեցին կայել այս կամ այն քաղաքական կառքին,
- 5.- Վերջապէս, գտնել այս թնճուկի լուծման բանալին եւ ցոյց տալ, թէ ինչպէս կա-

րելի է կամօրջել երկու հատուածները անջատող վիճը եւ ապահովել Հայ եկեղեցին՝ նման ընդհանուր բախումի մը կրկնութեան դէմ»: (էջ 13):

Ներածականի մէջ, խօսելով Հայաստանում տիրապետող խորհրդային անժիմի մասին՝ հեղինակը ընդունում է, որ այդպիսի մի անժիմի տակ ապրող «անցոր ու բարեպաշտ Հայ եկեղեցականը, դաւաճանած ու լքւած իր շատ մը պաշտօնակիցներէն, երկրի մէջ թէ երկրէն դուրս, վստահի միայն իր լուռ համակերպութեան՝ չվտանգելու ամէն ինչ եւ փրկելու ի՛նչ որ կարելի է»: Էջ 21): Սակայն, նրան զարմացնում է, որ հայ եկեղեցականը — բացի որոշ անձերէ — արտասահմանի մէջ բռնած է նոյն մտքերն, այսինքն՝ անվերապահ համակերպութեան եւ հնազանդութեան մամապարիբ: Պարզ է, որ մի ուժ իր քաղաքական նպատակներին է ուզում «ծախել Հայ եկեղեցիի դարեւոր իրաւունքներն ու անկախութիւնը նաեւ արտասահմանի մէջ: Հայ ժողովուրդի այն տարրը, որ մօտ երեսուն տարի առաջ Մայր Երկրի մէջ օղնութեան փութացած էր Հայաստանայցի եկեղեցիին, երբ անոր նիւթական հարստութիւնը կը կողոպտէին ցարի նախարարները, չէր կրնար անտարբեր նստիլ, երբ Չեկայի դորձակալները փորձեցին կողոպտել նոյն եկեղեցիի բարոյական, հոգեկան կալածանքը, եւ կուզէին զայն վերածել աւաղակնեբու ալբի մը: Հ. Յ. Գալ-նակցութիւնը ստիպւեցաւ հրապարակ զսլ՝ պաշտպանելու Հայ մարդու խղճի

աղատութիւնը եւ հայ եկեղեցւոյ ինքնավարութիւնը...

... Նոյն պաշտպանութիւնը ցոյց պիտի տար ո եւ է ալ կազմակերպութեան — նոյնիսկ կոմունիստ խմբակի մը — եթէ անոր համար հայ ժողովուրդի Միութիւնն ու դատը եւ ինքնատնօրէնութիւնը լինէին բացառիկ արժէքներ: Բայց երբ ազգային արժէքներու եւ հաստատութեանց մասին տարբեր դժնահատութիւններ կան, բարսուժը կը դառնայ անխուսափելի Ներժի՛ն ԿեԱՆՔԻ ՄԵՋ, ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԵՑՈՒԹԵԱՆ ՄԻԶԱՄՏՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ:» (Էջ 22): Օտարը միջամտեց հայ գաղութային կեանքին՝ օգտագործելով պայքարի մէջ նաեւ հայ եկեղեցին:

Գրքի առաջին գլուխն է՝ «Սորհրդային ոճի մը եւ կրօնն ու եկեղեցին»: Այստեղ հեղինակը մէջբերումներ է արել գրեթէ բոլոր մարքսիստ եւ բոլշևիկ ակամաւոր տեսարանների շլշատութիւններից՝ կրօնի եւ եկեղեցու մասին: Նրա ուշադրութիւնից չի վրիպել նաեւ խորհրդային օրէնդրութիւնը նայն խնդրի վերաբերեալ: Գրախօսականի սահմանների մէջ դժւար է բերել այն չափազանց հետաքրքրական փառամտները, որոնք կոյրերին անգամ կարող են համոզել, թէ որն է բոլշևիզմի եւ խորհրդային իշխանութեան իսկական վերաբերմունքը հանդէպ կրօնի եւ եկեղեցու: Եւ որքան օգտակար է այս ամենը այն մոլորածների համար, որոնք հալած իւղի տեղ են ընդունում բոլշևիկեան կեղծիքները:

Շատ բնորոշ է «Անասուած» քերթից փառամտ մէկ հատւածը (1932 թ. նոյ 29): «Անասուածներու Միութիւնը պէտք է հարւածային կերպով հաշտեցնուի Ենթարկէ եկեղեցին՝ հաւածելով հոգեւորականութիւնը, որպէսզի անոնք ստիպւին ցրել կամ չեղողանալ եւ այսպէսով իրաւունք տալ իշխանութեանց, որ «փակեն» տակաւին բաց մը»:

Բայց վկայութիւնները ճշտում են սպացուցանել մէկ բան, թէ՛ «Խ. Միութիւնը իր բոլոր օրգաններու միջոցով կաշխատի բռնի կերպով ջնջել կրօնը իր սահմաններէն ներս»: (Էջ 38): Եւ այսպիսի մի պետութիւն ներկայացուցեց որպէս պաշտպան հայ եկեղեցու...

Երկրորդ գլխի մէջ հեղինակը գրադուում է խորհրդային իշխանութեան եւ Հայաստանեայց եկեղեցու փոխ - յարաբերութիւններով: Հայաստանեայց եկեղեցու վիճակը պատկերացնելու համար նա առաւ փառամտներ է անում նաեւ «Վեմ»-ից («Վեմ», Յունիս - Ապրիլ 1935): Բերում է նաեւ փառամտներ «Պայքար»-ից, «Հ. Կոչակ»-ից, «Ազատ եկեղեցի»-ից եւ այլն, եւ միանգամայն պարզում է այն ուղերգութիւնը, որ սպրում է հայ եկեղեցին խորհրդային ռեժիմի տակ:

Յետոյ մանրամասնօրէն կանգ է առնում Մայր Աթոռի փայտաման ընթացքի վրա՝ բւերով խորհրդային իշխանութեան բոլոր դէկրետները, որ վերաբերում են այս խնդրին եւ որոնք չեն նախադրում ոչ հայ եկեղեցու միասնականութիւն, ոչ որ եւ է ներապետութիւն եւ ոչ էլ Ամենայն Հայոց Կաթողիկոս:

Ապացուցանելով, որ երկրի մէջ բոլշևիկեան փառակամութիւնը վերացնում է եկեղեցական իշխանութեան ամեն մի հետք՝ հեղինակը նոյն ժամանակ պարզում է, թէ ինչպէս փառակամ հաշիւներով նոյն բոլշևիկները արտասահմանում պաշտպան են հանդիսանում եկեղեցականների «իշխանութեան», հրաքարում են կիրքերը եւ պայքար ստեղծում հայ համայնքների մէջ:

Առանձին գլուխ էլ նւիրւած է Չեկայի վեղարարութեան գործակալներին արտասահմանում (Էջ 85)՝ Պատմական եպիսկոպոս, Ռուբին Սպ. Մանասան, Յ. Ղլընեան եպիսկոպոս, Մազրմեան արքեպիսկոպոս: Այս ստոր եւ կեղտոս

մարդոց գործունեութեան մասին հեղինակը տւած է այնքան առատ փաստեր, որ նիւթ կարող էին դառնալ մի առանձին հատորի:

Հետաքրքրական տեղեկութիւններ կան եւ Դուրեան Արք.-ի ու բոլշեւիկների յարաբերութիւնները մասին: Խորհրդային մամուլը միայն երկու տողով հաղորդեց Սուրենեան կարողիկոսի մահուան լուրը, մինչդեռ Ամերիկայի բոլշեւիկեան առեւտրական ներկայացուցիչ Բոգդանով հետեւեալ հեռագիրն էր ուղարկում Նիւ Եորքի Հայոց Առաջնորդարանին, Դուրեանի սպանութեան առթիւ. «*Հաճեցէք ընդունել մեր խորունկ ցաւակցութիւնները. Ղ.Ե. Արք. Դուրեանի եղբրական մահուան առթիւ: Մենք հայ Ժողովուրդին վշտակեց ենք այս անդարձանելի կորուստին առթիւ: — Բողոքանով*»: (Էջ 106): Այսպիսով ստեղծել էր մի չտեսնուած ներդաշնակութիւն հայ եկեղեցականների եւ բոլշեւիկների միջեւ արտասահմանում, քայքայելու համար արտասահմանի հայութիւնը:

Հետեւեալ գլուխների մէջ Պարտիզեանը նկարագրում է, քէ ինչպէս հայ եկեղեցին հակազգային կուրի քատր դարձաւ հայ գաղութների մէջ: Բոլշեւիկները ընտրեցին եկեղեցին, որովհետեւ նրանք ուզում էին գրաւել մի հաստատութիւն, «*ուր զազութահայ բուր տարբեր շիման կողային կամայ թէ ալամայ, որու համար բոլոր տարբերն ալ պատրաստ էին զոհելու եւ կուելու*» ...

Ընթերցողը հետաքրքրութեամբ կը կարդայ այն էջերը, որոնք վերաբերում են սփիւռքի հայութեան մէջ տարած պայքարին հայ դրօշին դէմ, բազմաթիւ մէջքերումներով հայկական մամուլից, որոնք վերաբերում են այդ խնդրին եւ որոնք, ի միջի այլոց, պարզում են ռամկավարների երկդիմի քաղականութիւնը այս խնդրում՝ «գուր-

գուրանքի առակայ»-էն սկսեալ մինչեւ «*բուրջի կտորը*» (էջ 150 եւ 151):

Այսպէս՝ «Ուրականը Ամերիկահայ գաղութին մէջ» եւ «Օրէնքը պիտի տիրէ» գլուխներում մանրակրկիտ կերպով քննուած են բոլոր ապօրինի գործողութիւնները, ազգային եւ հոգեւոր հաստատութեանց բազմաթիւ գրութիւնները, որոնք վերաբերում են Դուրեան Արք.-ի եւ իր շուրջը հաւաքուած քիլիկ գործունեութեան: Իսկ «Ղեւոնդ Արք. Դուրեան մտաւորական առաջնորդ» գլուխում փորձ է արւած պատկերացնելու այդ կղերականին, որպէս մարդ եւ առաջնորդ: Առաջ են բերուած Դուրեանին մանաշող անձանց վկայութիւններ նրա մասին եւ մէկիկ - մէկիկ քուած են Դուրեանի ապօրինի կարգադրութիւններին կուրօքէն եքթարկելի չուող եւ Սահմանադրութիւնը պաշտպանող հոգեւորականների դէմ սարքուած դաւերը: Եւ ընթերցողը հետաքրքրութեամբ տեսնում է, քէ ինչպէս, կարծես անկատարօրէն, Դուրեանի ձախուեր կարգադրութիւնների շնորհիւ, ամպերը կռտակում են ամերիկահայ երկրնուում, մինչեւ հոգոյնի անպատուութեան պատմութիւնը:

Յետոյ հեղինակը անցնում է «Միացեալ ճակատի» կազմութեան խնդրին: Կանգ է առնում այն երեւոյթի վրա, քէ ինչպէս եկեղեցին օգտագործեց մութ ու հայալնաս քաղաքական հաշիւների համար, քէ ինչպէս բոլշեւիկեան ռեժիմը քեֆելով հայ եկեղեցին դէպի այսպէս կոչուած «միացեալ ճակատը», ուզում էր մէկ կողմից ելմնովին քանդել այդ եկեղեցին, իսկ միւս կողմից պառակտելով գաղութահայութիւնը՝ առաւելագոյն շահեր սպահովել իրեն համար:

Կան այս գլխի մէջ չափազանց հետաքրքրական մէջքերումներ համայնավար «Բանուր» քերքից, որ բոլորովին տարբեր լինում էր գործածում Դուրեանի

հասցեին մախ քան նրա սպանութիւնը, ինչպէս, օրինակ՝ «Առաջնորդը հողիով դաշնակ մասողէրիտաներէ հետ է»... կամ «Ժողովրդական դանդաւաններուն աւրինքը քարէ տուղ Դուրեանները»... Եւ կամ՝ «Իր ամբողջ կեանքի ընթացքին ուրիշներու աշխատանքով յղիացող մի տղուկ, ինչպիսին է Դուրեան եպիսկոպոս... (էջ 365) : Իսկ Դուրեանի սպանութեան յետոյ, 1934 թ. Մայիս 9-ին, գրում էր, թէ՝ «Այդ դանակը, որ խրեցաւ Դուրեանի կողին, խրեցաւ Նորհրդային Հայաստանի կողին, անոր կոմունիստական սրտին, աշխատութեան դասակարգային սկզբունքներուն համար» : (էջ 365) :

Բազմաթիւ ուրիշ հետաքրքրական օրինակներով Պարտիզան բաց է անում ընթերցողի առջեւ «միացեալ մակատ» կոչած զգրելի դաւի ներքին ծախքերը : Այս «միացեալ մակատը» կազմած էր դեռ Դուրեանի սպանութիւնից առաջ, սակայն, սպանութիւնից յետոյ էր, որ մի արտասովոր աշխուժութեամբ նետւեց հրապարակ, օգտագործելով Դուրեանի դիակը :

Ինչ էր Դաշնակցութեան դիրքը հանդէպ հայ եկեղեցու : Այս հարցին հեղինակը պատասխանում է «Հայ Յ. Դաշնակցութիւն եւ հայ եկեղեցին» գրքի մէջ : Նա յիշեցնում է ակամաոր գործիչներ Ակնունդի եւ Շահրիկեանի գրածները այդ առթիւ. «Դաշնակցութիւնը հայ եկեղեցիներու քարերն անդամ կը պաշտպանէ, եթէ ո եւ է Սուրբան, որ ըլլայ այն, կամ որ եւ է նախարարութիւն, որն ըլլայ այն, յանդգնի ձեռք դնել անոնց վրա» (Ակնունդի) : «Միայն ըսէ՛ք, մաքրակրօն, կարճ եւ երկայն փէշերով շէրիաթճիներ : Դուք ե՞րբ էք պաշտպանած հայ եկեղեցիին շահերը... Ըսէ՛ք, ինչո՞ւ կը ստէք Դաշնակցութիւնը զրպարտելով... Դուք ունեցած էք, տեսած էք երբեք ընդհա-

նուր վտանդի, յարձակումի, ճնշումի, բռնութեան հանդէպ աւելի անկեղծ պաշտպան եկեղեցիի սեփականութեանց եւ հայ ժողովրդի համար, քան Դաշնակցութիւնը» : (Յ. Շահրիկեան), (էջ 406) :

Հ. Յ. Դաշնակցութեան երկու ակամաոր հրապարակագիրներու այս տողերը լրիւ կերպով ներկայացնում են Դաշնակցութեան վերաբերմունքը հանդէպ հայ եկեղեցու : «Ինչպէս 1903 - 1905-ին, — ասում է հեղինակը —, այսօր ալ իր իրաւունքներուն համար կըտուղ հայ ժողովրդի կողքին կանգնած է Հ. Յ. Դաշնակցութիւնը... Դաշնակցութիւնը, իրբեւ հայ իրականութենէն ծընունդ առած քաղաքական կազմակերպութիւն մը, բարոյական պարտաւորութիւն կը զգայ պաշտպանել հայ քաղաքացին՝ անոր խղճի վրա դործած անարդար բռնութեան դէմ, եւ աւելի մեծ պարտաւորութիւն մը՝ պաշտպանելու հայ եկեղեցին իրբեւ հայ ժողովրդի պատմական ստեղծագործութիւնը, անոր հոգեկան պէտքերուն զոհացում տուող հաստատութիւն մը, որ նոյն ատեն ծառայած է իրբեւ միութեան սիմպոլ մը, նշանակ մը, հայ ժողովրդի համար : Պաշտպանած է դայն սուլթանի դէմ, պաշտպանած է դայն ցարեղի դէմ, եւ չէր կրնար չպաշտպանել դայն բողոքելու դէմ» :

Վերջին գլուխը ներած է երբակացութիւններին : Հեղինակը մախ դիտել է տալիս, որ հայ եկեղեցու տագնապը «չի բխիր եկեղեցւոյ ներքին կոթնէն ու յարարերութիւններէն, այն է՝ դատական, վարդապետական, բարեգործական ու նախարարական անհամաձայնութիւններէ եւ տարակարծութիւններէ, այլ թէ՛ ան պարտագրած է արտաքուստ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ այն տարականոն պայմաններէն, որոնց ներքեւ կը գտնուի այժմ հայ եկեղեցւոյ Մայր Աթոռը : Կարճ խօսքով՝ հայ եկեղեցւոյ

տաղնային պատճառը ՔԱՂԱՔԱԿԱՆ է եւ ոչ եկեղեցական»։ (Էջ 429)։ Եւ ցաւ է յայտնում, «որ Մայր Աթոռը ցոյց չուաւ մինչեւ այսօր այն բարոյական կորովը, որ այդ նպատակով կազմուեալ էր իրմէ։ Վերջին քանի տարիներու վատտերը կը հաստատեն մէկ իրողութիւն, որ Մայր Աթոռը, հակառակ իր բացարձակ չեղարութեան հրահանգներուն՝ բաղմամբիւ անզամներ ապացուցուց որ ինք կողմնակից է արտասահմանեան հայ իրականութիւնը փոթորկող քաղաքական պայքարներու մէջ»։ (Էջ 427)։

Ըստ հեղինակի, «Հայոց եկեղեցիէ Մայր Աթոռը դատապարտուած է շահագործութեան եւ մահուան, ինչ որ արդէն նպատակն է խորհրդային իրականութեան։ Այս պարագաների մէջ անհնարին է պահպանել եկեղեցու միասնականութիւնը։

Յետոյ Պարտիզան ֆնուր է Հայ եկեղեցու վերաբերեալ օրէնսդրական խնդիրները, տանկահայ եւ ռուսահայ հատուածների տարբերութիւնը եւ այլն։ Նա առանձին ուշադրութիւն է դարձրելու հայ եկեղեցու ժողովրդապետական սկզբունքի վրա։ «Հայ եկեղեցւոյ օրէնքներն ու ականդրութիւնները եղծելով ու սխալ մեկնարանելով՝ արտասահմանի հոգեւոր առաջնորդները այսօր օրէնքէ դուրս եւ վեր կը նկատուին, եւ կարելի չէ զանոնք ժողովրդական պատասխանատուութեան կոչել»։ (Էջ 477)։ Եւ խօսելով այն առաջարկների եւ պահանջների մասին, որ դնում են ռուսկաւարները եւ գանազան բոլշեւիկացիներ, իրր քէ յանուն հայ եկեղեցու միասնականութեան (օրինակ Դաշնակցութեան քաղաքական ուղղութեան մասին եւ այլն), հեղինակը արդարացի կերպով եզրակացնում է. «Ի՞նչ կապ ունի Հ. Յ. Դաշնակցութեան քաղաքական ուղղութիւնը Հայոց եկեղեցւոյ տաղնային հետ։ Ապա եթէ Դաշնակցութիւնն ալ ուզէ իր քաղաքական ուղ-

ղութիւնը նախապայման դնել բանակցութեան (ինչպէս անուր նա ռուսկաւարները), ի՞նչ պիտի լինեն հայ եկեղեցւոյ նախապետութիւնը, անոր ներքալը, եկեղեցական հատուածները»։ Եւ վերջացնելով գիրքը՝ աւելացնում է՝ «Այդ անմիտ ու բացարձակապէս անտեղի պայմանին, սակայն, Դաշնակցութիւնը միայն արհամարհանքով կը պատասխանէ, այն արհամարհանքով, զոր Եպիփանատոս խոսցուցած է հետեւեալ զրուածքին մէջ։

Ներոն մահուան դատապարտած էր Լատերանոս անուն կոռնուլ մը։ Ներոնի պաշտօնեաներէն Եպիփանոս կը մօտենայ Լատերանոսի եւ կը հարցնէ անոր թէ՛ բան մը ունի՞ ըսելիք մեռնելէ առաջ։ Լատերանոս կը պատասխանէ ստոյիկի մը պէս. «Եթէ ըսելիք մը ունենամ՝ տիրո՛ջը կըսեմ, ո՛չ թէ անոր ծառային»։

Հետաքրքրական եւ վերին աստիճանի արժէքաւոր աշխատութիւն մըն է Պարտիզանի գիրքը։ Հեղինակը լիովին յաջողել է իր առաջադրած նպատակի մէջ։ Յենաւ չափազանց առատ փաստերի վերա՛րա՛ նա կարողացել է ապացուցանել, որ հայ եկեղեցու տագնապը եւ տխրահրոչակ «միացեալ մակաւոր» կազմակերպւել էին օտար իշխանութեան կողմից քայքայելու համար հայ եկեղեցու հիմքերը։ Դուրսն Արքեպ. ի դիակը շահագործեց միևնույն վերջ։

Յանձին հայ եկեղեցու տագնապի, Ա. Պարտիզանը ներկայացրել է բովանդակ հայ կեանքի տագնապը։

Ս. ԱՐԱՄԵԱՆ